քամին յուարէ նոցա, առաւելոցոյց զհարստահարութիւնն ժողովրդեան, զի ապստամբութեամբ նոցա ինքն արդարասցի, և եհաս իսկ որում ցանկայրն. «Զմեծամեծ չարիսն, զոր յուզէր Փլորոս, զարժանի պատճառս չգտանեմ» ասէ Յովսեպոս։ Թէպէտ 'ի դալ Կեստիոսի դատաւորին Ասորւոց յԵրուսաղէմ՝ դիմեցին առ նա Հրէայք արք իբրեւ 300 բիւրք և աղաչէին զնա 'ի բաց վանել զՓլորոս զապականիչ գաւառին, այլ շահեցան և ոչ ինչ. զի նա յորդորեաց զնոսա հանդարտել 'ի խաղաղութիւն, և անց գնաց։ Բայց Փլորոսի ոչ ինչ էր փոյթ զամբաստանութեանց նոցա. մանաւանդ թէ ծաղր առնէր զաղաղակս խառնամբոխ խուժանին իբրեւ մոլեգնելոց։

Եղիազար որդի քահանայապետին Անանիա իշխան Տաճարին, բարձ զամենայն պատարագս վասն օտարաց (66). ընդ որս բարձաւ և պատարագն վասն Կայսեր. յարձակեցաւ ամբոխ ինչ 'ի վերայ դղեկին Մասադայ առ Մեռեալ ծովաւն, և կոտորեաց զամրականան Հռովմայեցիս, և այսպէս եղեւ սկիզբն պատերազմին ապստամբութեան։ Խաղաղասէրքն աղաչէին զՓլորոս առնուլ զառաջս խռովութեանն, բայց նա չետ ինչ նոցա պատասխանի. 3000 հեծեալքն՝ զոր թագաւորն առաքեաց, ոչ կարացին լինել դիմակաց ապստամբացն, որ երթային և աճէին, եւ անդադար յարձակէին 'ի վերայ արքունական դղեկին Երուսաղէմի, մինչեւ արկանել զՀռովմայեցիսն յերեսին աշտարակն շինեալս 'ի Հերովդէէ, եւ զօրացն Ագրիպպայ շնորհեցին երթալ 'ի բաց։ Իբրեւ անձնատուր եղեն նոցա Հռովմայեցիք, կոտորեցին զնոսա յաւուր շաբաթու հակառակ խոստմանն իւրեանց։

Բարձաւ այնուհետեւ ամենայն յոյս խաղաղութեամբ զիրսն վճարելոյ։ Կեստիոս Գաղղոս կուսակալ Ասորւոց 25000 արամբ խաղայր 'ի Հրէաստան, զճանապարհայն զգիւղս և զքաղաքս հրձիգ առնէր, և որ ոք անկանէր 'ի բուռն կոտորէր։ Յարկանել զբանակ իւր հանդէպ Երուսաղէմի, Հրէայք յարձակեցան մոլեգին 'ի վերայ նոցա, եւ կոտորեցին աւելի քան զ500 այր։ Այլ Կեստիոս եմուտ 'ի քաղաքն ստորին, եւ հարկանէր զքաղաքն վերին զաւուրս հինգ, եւ 'ի վեցերորդումն զՏաճարն իսկ գլխովին, եւ